



ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
Ռեկտորի հաշվետվություն  
2014-2015 ուսումնական տարի



ԵՎՐԱՍԻԱ  
միջազգային  
համալսարան

[www.eiu.am](http://www.eiu.am)

Մեր ձեռքը դարի զարկերակին է ...

## ՆՊԱՏԱԿ 1. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

**Խնդիր 1.1 Ներդնել իրականացվող կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման, գնահատման, ինչպես նաև բուհի կողմից նոր կրթական ծրագրերի իրականացման մեխանիզմներ:**

1. Իրականացվող ՄԿԾ-ների վերլուծություններ՝ հիմքում դնելով ԵՄՀ շահակցների կարիքների հիման վրա խորքային վերլուծությունները: Վեր հանել գործող ՄԿԾ-ների բարելավման ուղիները, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման հնարավորությունները:

2. Ամբիոնների նիստերում, մեթոդխորհրդում քննարկել և գիտական խորհրդում առաջարկություններ կատարել ՄԿԾ-ների արդիականացման, ինչպես նաև նոր ՄԿԾ-ների ներդրման վերաբերյալ:

### **Հաշվետվություն**

2014-2015 թթ. ընկած ժամանակահատվածում համալսարանը գտնվել է ինքնավերլուծության գործընթացում՝ պատրաստվելով արտաքին ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Ինքնավերլուծության ընթացքում իրականացվել են մի շարք քանակական և որակական հետազոտություններ ԵՄՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից, արդյունքները ներկայացվել են մասնագիտական ամբիոններ՝ բարեփոխումների իրականացման նպատակով: Որակի ապահովման կենտրոնի կողմից մասնագիտական ծրագրերի վերանայման գործընթացին մասնակցել են հիմնականում ներքին շահակիցներ, այդ թվում ուսանողներ և դասախոսներ: Այս առումով համալսարանն դեռևս որոշ անելիքներ ունի՝ արտաքին շահակիցների, մասնավորապես գործատուների ներգրավման առումով: Ծրագրերի վերանայման գործընթացին գործատուների ներգրավումը, թերևս, ԵՄՀ հիմնական մարտահրավերներից է, քանի որ պահանջում է ոչ միայն ֆինանսական, այլ նաև մարդկային առավել մեծ թվով ռեսուրսների ներգրավում: Այդ նպատակով արդեն իսկ պլանավորված է և 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում կառանձնացվեն որակի ապահովման ամբիոնային գործակալներ, ովքեր կաջակցեն մասնագիտական ծրագրեր իրականացնելու ընթացքում արտաքին շահակիցների ներգրավման հարցում:

Կրթական ծրագրերի մշակման և վերանայման ընթացքում ուսանողների շրջանում իրականացված հարցումների արդյունքներով

հարցվածների 66. 7%-ը համարում է, որ համալսարանը միանշանակորեն հետևողական է ուսումնական նյութերի արդիականացման հարցում, 62. 7%-ը՝ համարում է, որ համալսարանը միանշանակորեն հետևողական ուսանողակենտրոն մեթոդների կիրառման հարցում, 70. 3 %-ը բարձր է գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի արհեստավարժությունը: Նշված ցուցանիշները, կարծում եմ, բավականին խոսուն են, չնայած գիտակցում ենք, որ բավարարվածության աստիճանն անհրաժեշտ է հասցնել առավելագույնի և այդ ուղղությամբ մասնագիտական ամբիոնները և համալսարանի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներն իրականացնում են նպատակային աշխատանք:

2014 թ-ին հավատարմագրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեկնարկել է «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի ՄԿԾ-ների բարելավման գործընթացը: Հետազոտություններն իրականացվել են ներպետական պահանջների և միջազգային փորձի ուսումնասիրման ուղղություններով, որի արդյունքում հստակորեն մշակվել են համապատասխան մասնագիտության կրթական ծրագրերը: Իրավագիտության ամբիոնի փորձը փոխանցվել է մյուս երկու ամբիոններին, մասնավորապես՝ կազմակերպվել են քննարկումներ ամբիոնների դասախոսների հետ, ամբիոնային նիստերին ներկայացվել է ուսումնառության արդյունքների մշակման մեթոդաբանությունը: Իրականացված աշխատանքների հիման վրա 2015-2016 ուս.տարվա ընթացքում կվերանայվեն և կբարելավվեն Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև Օտար լեզուների և գրականության ամբիոնների մասնագիտությունների կրթական ծրագրերը:

2015թ. սեպտեմբերից Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի կողմից «Թի Բի Էս» ՓԲԸ-ի հետ մահատեղ ներ է դրվել «Հյուրընկալման բիզնեսի կառավարում» մասնագիտացման ուսումնական պլանը:

Կրթական ծրագրերը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանացնելու նպատակով նախկինում կնքված 17 հուշագրերին 2014-2015թթ. ավելացել է ևս 5-ը. «Նաիրի Ինչուրանս» ԱՄՊԸ-ի, «Զի Սոֆտ», «ԷյԴիԱր Փարթներս», ՄՊԸ-ների, «Թի Բի Էս» ՓԲԸ-ի և ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան Ռազմական ինստիտուտի հետ:

2014-2015 ուստարում համալսարանը զգալի առաջընթաց ունի ուսման առաջադիմության առումով:

- ✓ Առկա ուսուցման բակալավրի ուսանողների 31% գրանցել է 85% -ից բարձր միջին որակական գնահատական:
- ✓ Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսանողների 28% գրանցել է 90% -ից բարձր միջին որակական գնահատական:
- ✓ նախորդ տարվա համեմատ 2014-2015 ուստարում առկա ուսուցման բակալավրի ուսանողների 41% և մագիստրատուրայի ուսանողների 16% բարելավել է միջին որակական գնահատականը:
- ✓ 2014-2015 ուստարվա աշնանային և գարնանային կիսամյակների արդյունքների հիման վրա ամփոփվեց «Օհանյան կրթաթոշակ»-ը և համալսարանի ուսանողների լավագույն տասնյակը՝ արժանացան ուսման վարձի 10-100% զեղչերի:

Այսպիսով 2014-2015 ուստարվա ընդհանուր որակական առաջադիմությունը կազմել է 83% /3,3 միավոր/: Այս ցուցանիշով ԵՄՀ-ն ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման համակարգում 2015թ-ին ներառվել է երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհերի առաջին եռյակում: Ուսումնառության արդյունքներ, միջազգային ուղղվածություն և հանրային կապեր բաժիններում ԵՄՀ-ն զբաղեցրել է 2-րդ տեղը, իսկ ուսանողներ բաժնում՝ 3-րդ: Կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած ուսանողներից Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի միջոցով 2014-2015թթ մասնագիտական աշխատանքի են տեղավորվել շրջանավարտների 41%:

**Խնդիր 1.2. Ներդնել ուսումնառության որակի շարունակական բարելավման մեխանիզմներ՝ նպաստելով ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնագիտական և մեթոդական որակավորումների բարձրացմանը, ինչպես նաև ընդլայնելով պրակտիկ գործունեության իրականացման հանարավորությունները:**

1. Իրականացնել ԵՄՀ մասնագիտական, ընդհանրական և մեթոդական վերապատրաստումներ՝ ուղղված դասախոսների որակավորման բարձրացմանը:

2. Իրավագիտության ամբիոնին կից գործող իրավաբանական կլինիկայի միջոցով նպաստել ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտ-ների, ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ արտաքին շահակիցների մասնագիտական ծառայու-թյունների մատուցմամբ:

3. Տնտեսագիտության ամբիոնին կից ստեղծել բիզնես դպրոց և նրա միջոցով նպաստել ԵՄՀ տնտեսագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտ-ների, ուսանողների մասնագիտական որակավորման բարձրացմանը՝ արտաքին շահակիցների մասնագիտական ծառայությունների մատուցմամբ:
4. Օտար լեզուների և մանկավարժության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների շնորհիվ ԵՄՀ դասընթացների կենտրոնում իրականացնել օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ դասախոսների ընդհանրական վերապատրաստումների շրջանակներում:
5. Վերապատրաստումներին ներգրավել ԵՄՀ ասպիրանտներին՝ խրախուսելով նրանց համալրումը ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմին:

#### **Հաշվետվություն**

Պրոֆեսորադասախոսական կազմի անընդհատ մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով ամբիոնները իրականացնում են փորձի փոխանակման և ներքին վերապատրաստման ծրագրեր: Դասախոսները մասնակցում են նաև արտաքին (տեղական և միջազգային) վերապատրաստման ծրագրերի:

Դասախոսները պարբերաբար մասնակցում են Հայաստանում և արտերկրներում իրականացվող մեթոդական և մասնագիտական տարբեր վերապատրաստումների, առցանց դասընթացների: Համալսարանը 2011 թ. ի վեր Եվրոմիության կողմից ֆինանսավորվող Էրազմուս Մունդուս (Գործողություն 2) ծրագրի 3 տարբեր կոնսորցիումների (ALRAKIS I, ALRAKIS II, MID) անդամ է, որոնց շրջանակներում համալսարանի 14 ուսումնաօժանդակ կազմի աշխատակից և դասախոսներ երկարաժամկետ մասնագիտական վերապատրաստում են անցել (նվազագույնը 1 ամիս) կոնսորցիումների անդամ եվրոպական տարբեր բուհերում՝ բացակայության ընթացքում պահպանելով ԵՄՀ-ում աշխատանքը: Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը պարբերաբար վերապատրաստվել է նաև Tempus IV, Թվինինգ, Բանավեճի միջազգային կրթական ասոցիացիա /IDEA/, GIZ Էլեկտրոնային ուսուցում ծրագրերի

շրջանակներում ինչպես Հայաստանում եվրոպացի փորձագետների կողմից, այնպես էլ արտերկրում:

Մասնագիտական վերապատրաստման նպատակով կարևորվում է դասախոսների մասնակցությունը Հետազոտության և զարգացման կենտրոնի կողմից ամեն տարի իրականացվող գիտաժողովներին, որոնց արդյունքները տպագրվում են առանձին ժողովածուի տեսքով:

Համալսարանում Իրավագիտության ամբիոնին կից ստեղծվել է իրավաբանական կլինիկա, որի միջոցով ապահովվում է ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների մասնագիտական որակավորման բարձրացումը՝ արտաքին շահակիցներին մասնագիտական ծառայությունների մատուցման, սեմինարների, վարպետության դասերի կազմակերպման միջոցով: 2014-2015 ուս.տարվա ընթացքում կազմակերպվել է 4 սեմինար և 2 վարպետության դաս գործատուների, մասնավորապես՝ ԷյԴիԱր Փարթներս մեդիացիոն ընկերության և Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության, ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական բաժնի աշխատակիցների և ամբիոնի կողմից: 3-րդ կուրսի ուսանողները դատարան պրակտիկա են անցել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում, 6 ուսանող մասնակցել է Մեդիացիայի զարգացման ամառային ծրագրին, Միջազգային մարդասիրական իրավունքի ամառային դպրոցին և Եվրոպական իրավունքի աշնանային դպրոցին: Կլինիկայի 7 ուսանող մասնակցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում և «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենսդրական բարեփոխումների քննարկմանը: Մեկ ուսանող մասնակցել է «Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոց» եռամսյա ծրագրին, որի շրջանակներում իրականացրել է «Կոռուպցիայի հասկացությունն ու տիպաբանությունը» թեմայով սեմինար:

Ինչպես նախատեսված է ԵՄՀ 2014-2018 գործողությունների ծրագրով՝ ստեղծվել է նաև Բիզնես դպրոց, որն առայժմ սաղմնավորման և կայացման, ռազմավարական խնդիրների և ծրագրերի հստակեցման փուլում է: Վերոհիշյալ երկու կենտրոններն ունեն պատասխանատուներ՝ համալսարանը հատկացրել է անհրաժեշտ հաստիներ:

**Խնդիր 1.3. Ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի բարելավում:**

1.ԵՄՀ առաքելության, արժեքների, ռազմավարության, որակի ապահովման քաղաքականության հիման վրա մշակել ԵՄՀ ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին կանոնակարգված քաղաքականություն (միասնական փաստաթղթի տեսքով):

2.Հստակեցնել և ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին քաղաքականությանը համապատասխանեցնել գործընթացի իրականացման համար առկա գործիքները (կարգեր, կանոնակարգեր, ընթացակարգեր և այլն):

3.Բարելաված գործիքների միջոցով իրականացնել ուսուցման որակի ապահովման և գնահատման մոնիտորինգ (օրինակ՝ ուսանողների կողմից դասախոսի գնահատում, պետական քննությունների արդյունքում հանձնաժողովի նախագահի կարծիք, դասընթացների գնահատում և այլն):

**Հաշվետվություն**

2014-2015 թ. ը եղել է Բեկումնային համալսարանի ներքին որակի ապահովման համակարգի վերանայման առումով, ինչն իրականացվել է արտաքին դրամաշնորհային ծրագրի միջոցոց (Համաշխարհային բանկի “Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ վարկային ծրագրի” Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և դրա հետագա բարելավում” Բաղադրիչի շրջանակներում): Ծրագրի շրջանակներում վերանայվել են համալսարանի գործող բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, մշակվել են նոր փաստաթղթեր: Հիմնականում ներդրվել են ԵՄՀ Կառավարման խորհրդի կողմից հաստատված Որակի ապահովման ուղեցույցի պահանջները, կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործիքակազմը: Այսպիսով, ուսուցման որակի ապահովման և գնահատման ներքին համակարգի բարելավման համար առկա են բոլոր փաստաթղթերը, որոնք հիմնականում ներդրված են, սակայն որոշ գործիքների ներդրումը գտնվում է պլանավորման փուլում: Գործիքակազմի ամբողջական ներդրման վերջում նախատեսվում է իրականացնել արդյունավետության գնահատում՝ գործիքակազմի վերանայման նպատակով:

**ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

**ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

1. Խնդիր 2.1. Նպաստել ԵՄՀ գիտահետազոտական ներուժի և նորարարությունների զարգացմանը:
2. Վերաբերենդավորել հետազոտական կենտրոնը՝ առավել ճանաչելի դարձնելով գիտական հանրային և քաղաքականություն մշակողների շրջանում:
3. Բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի դերը կիրառական հետազոտությունների մեջ՝ արդյունքները ներդնելով կրթական ոլորտում, ինչպես նաև ապագայում ներկայացնելով իբրև պետական քաղաքականությունների բարելավման ուղղությամբ առաջարկներ
4. Տրամադրել թեմատիկ դրամաշնորհներ ԵՄՀ գիտահետազոտական կենտրոնի միջոցով՝ ԵՄՀ և/կամ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, ուսանողների հետազոտական գործունեության խթանման նպատակով:
5. Նպաստել օտարերկրյա և տեղական դոնոր կազմակերպություններից դրամաշնորհների ներգրավմանը և դրանց միջոցով հետազոտական աշխատանքների իրականացմանը
6. Հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող ամենամյա գիտաժողովների ճանաչելիությունը՝ նպաստելով թե՛ հայրենակից, թե՛ օտարերկրյա մասնակիցների թվաքանակի ավելացմանը:
7. Խրախուսել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական ակտիվությանը՝ դասախոսների վարկանշային սանդղակի և տարբերակված վճարման համակարգի կիրառման միջոցով:
8. Խրախուսել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի նորարարական նախաձեռնություններին՝ դասախոսների վարկանշային սանդղակի և տարբերակված վճարման համակարգի կիրառման միջոցով:
9. Նպաստել ԵՄՀ դասախոսների կողմից մասնագիտական և մեթոդական հետազոտությունների իրականացմանը և դրանց արդյունքների ներդրմանը ուսումնական գործընթացներում:



### Հաշվետվություն

Ռազմավարական նպատակների իրականացման համար ԵՄՀ հետազոտության և զարգացման կենտրոնը վերակազմավորվել է Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի, որը ճանաչելիության բարձրացման և գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման նպատակով 2014-2015թթ. ընթացքում կազմակերպվել են երկու գիտաժողովներ «ՀՀ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներն ու առաջնահերթությունները» թեմայով: Գիտաժողովներն իրենց բնույթով միջհամալսարանական էին: 2014թ. դեկտեմբերին իրականացված գիտաժողովում զեկուցումներով հանդես են եկել Եվրասիա միջազգային համալսարանի 18, կրթական ու գիտական կազմակերպությունների 21 դասախոսներ, ինչպես Եվրասիա միջազգային համալսարանի, այնպես էլ այլ բուհերի, կրթական ու գիտական կազմակերպությունների թվով 39 դասախոսներ, գիտական աշխատողներ, ասպիրանտներ, տնտեսության տարբեր ոլորտներում աշխատող մասնագետներ: 2015թ. գիտաժողովը նվիրված էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին և իրականացվել է ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ: Գիտաժողովին զեկույցներով հանդես են եկել Էրասմուս Մունդուս փոխանակման ծրագրով ԵՄՀ-ում հետազոտություն կատարող Բեռլինի Հումբոլդտի համալսարանի ասպիրանտ՝ Դեվիդ Լյուպոլդը, ԵՄՀ-ի, Վ.Սասրգսյանի անվան Ռազմական ինստիտուտի և մի շարք այլ համալսարանների դասախոսներ, ասպիրանտներ, գիտական աշխատողներ: Ներկայացված 16 հետազոտություններից 7 կատարվել են ԵՄՀ դասախոսների կողմից: Գիտաժողովների արդյունքները տպագրվել են առանձին ժողովածուներով, ինչպես նաև տեղադրվել են ԵՄՀ էլեկտրոնային կայքում: 2014 թ-ի դեկտեմբերի բուհերի համագործակցության շրջանակներում ԵՄՀ իրավագիտության ամբիոնի երկու դասախոս մասնակցել են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի դասախոսների 12-րդ գիտական կոնֆերանսին:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել են «Հետազոտական արդյունքների հրատարակման, հետազոտության վերհանված տվյալների վավերացման և հրապարակայնացման կարգ»-ը, «Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման» կարգը, «Ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգը»: Պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական ակտիվության խթանմանն ուղղված «Հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման» կարգը

նախատեսվում է գործադրել 2015-2016 ուս.տարվա ընթացքում:

Դասախոսների գնահատման համակարգը առավել չափելի դարձնելու և դասախոսի խրախուսման համակարգի հետ կապելու նպատակով 2014 թ. նոյեմբերի 21-ից 23-ը Ծաղկաձորում իրականացվել է «ԵՄՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի վերապատրաստում» ծրագիրը, որի ընթացքում քննարկվել են պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման համակարգը, հատկապես՝ Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման և հավելավճարների սահմանման կարգի, Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման չափանիշների և չափորոշիչների, Դասախոսի գործունեության ինքնագնահատման անցկացման կարգի, Դասախոսների վերապատրաստման կարգի նախագծերը և դասալսումների անցկացման և ուսանողների կողմից դասախոսների գնահատման կարգերը: Դասախոսների առաջարկություններն ամփոփվել են Որակի ապահովման կենտրոնի կողմից և ներառվել համապատասխան կարգերի մեջ:

**Խնդիր 2.2. Նպաստել հետազոտական և նորարարական նախաձեռնություններում ԵՄՀ ուսանողների ներգրավվածության մեծացմանը:**

1. Հետևողականորեն բարձրացնել ԵՄՀ հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպվող ամենամյա ուսանողական գիտաժողովների դերը՝ նպաստելով ԵՄՀ մասնակիցների թվաքանակի ավելացմանը:
2. Նպաստել ուսանողական խորհրդի գիտական թևի ակտիվացմանը, խրախուսել նրանց կողմից գիտական նախաձեռնությունների իրականացմանը:
3. Խրախուսել ԵՄՀ ուսանողների նորարարական նախաձեռնությունների իրականացմանը:

**Հաշվետվություն**

2014-2015թթ. ԵՄՀ-ում տեղի են ունեցել երկու ամենամյա ուսանողական գիտաժողովներ: 2015թ-ի ուսանողական գիտաժողովին զեկույցներ են ներկայացրել ինչպես ԵՄՀ, այնպես էլ Էրազմուս Մոնդուս ծրագրով համալսարանում ուսումնառող Տուչիայի համալսարանի, Վ.Սասրգսյանի անվան Ռազմական ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի երեք ուսանող: Գիտաժողովին ներկայացվել է 41 զեկույց՝ իրավագիտության, կառավարման, օտարլեզուների և գրականության բաժիններից: Համեմատած 2014թ.

ուսանողական գիտաժողովի մասնակիցների թիվը աճել է 12%: Լավագույն աշխատանքները տեղադրվել են ԵՄՀ էլեկտրոնային կայքում:

### ՆՊՍՏԱԿ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ

#### **Խնդիր 3.1. Խթանել ԵՄՀ միջազգային կրթական, գիտական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը:**

1. Իրականացնել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների և ուսանողների օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված վերապատրաստումներ՝ միջազգային համա-գործակցային ծրագրերում ներգրավվածության ընդլայնման նպատակով:

2. Ընդլայնել միջազգային համագործակցությունը օտարերկրյա շահակիցների (բուհերի, հետազոտական կազմակերպությունների, հասարակական կառույցների, պետական մարմինների, գործարար միջավայրի և այլնի) հետ՝ նպաստելով արտերկրում ԵՄՀ ճանաչելիության բարձրացմանը, գիտակրթական տարածքներում ինտե-գրմանը:

3. Նպաստել ԵՄՀ դասախոսների, ասպիրանտ-ների կողմից միջազգային գիտական և նորարարական նախագծերում ինտեգրմանը:

4. Ներգրավվել միջպետական համաձայնագրերում, դրամաշնորհային ծրագրերում՝ նպաստելով ԵՄՀ-ում ուսուցանող օտարերկրյա ուսանողների և ասպիրանտների թվաքանակի ավելացմանը:

#### **Հաշվետվություն**

Եվրասիա միջազգային համալսարանը 2014-15 թթ. շարունակել է «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) TEMPUS IV: Ծրագրի շրջանակներում ԵՄ վերջնարդյունքների կարգավորման մեթոդաբանությամբ (Tuning) մշակվել են ուսումնական ծրագրեր, վերապատրաստվել մարդկային ռեսուրսներ տվյալ թիրախային խմբի հետ աշխատելու և վերջիններիս համար կրթական ծրագրեր մշակելու համար, տեխնիկապես վերազինվել և ռեսուրսներով հարստացվել է ԵՄՀ գրադարանը:

Շարունակելով միջազգայնացմանն ուղղված իր քայլերը՝ Եվրասիա միջազգային համալսարանը Իսպանիայի Սևիլիա համալսարանի հետ համագործակցության շրջանակում 2015թ-ն դարձավ «Հարմոնիա» ծրագրի հայաստանյան գործընկերն ու

իրականացնողը: Ծրագիրն ուղղված է ԵՄ և գործընկեր երկրների բարձրագույն կրթության, հետազոտության և նորարարության բնագավառների միջազգայնացման ներդաշնակության զարգացմանը: «Հարմոնիա»-յի հիմնական նպատակն է բարձրացնել բարձրագույն կրթության գրավչությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունները դարձնել բարձրագույն կրթական համակարգի, հետազոտության և նորարարության բնագավառների իրադարձությունների գերազանցության կենտրոններ՝ համաշխարհային իրադարձությունների համատեքստում՝ նշված ոլորտներում ազգային ռազմավարության համաձայն:

**Խնդիր 3.2. Ընդլայնել ԵՄՆ ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների և վարչական աշխատակիցների շարժունակության հնարավորությունները դեպի օտարերկրյա գործընկեր բուհեր և այլ շահակից կազմակերպություններ և հակառակը:**

1.Նպաստել ԵՄՆ միջազգային դրամաշնորհային ծրագրերի թվաքանակի ավելացմանը՝ հիմքեր ապահովելով ԵՄՆ պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների, վարչական աշխատողների, ուսանողների շարժու-նակությունների ավելաց-մանը՝ որակավորման բարձ-րացման նպատակներով:

2.Նպաստել պրոֆեսորադա-սախոսական կազմի և ասպիրանտների գիտական և ճանաչողական այցելու-թյունների, գիտական համագործակցությունների, միջազգային գիտաժողովների մասնակցության աստիճանի բարձրացմանը՝ ԵՄՆ միջազգային համագործակցային ծրագրերի շրջանակներում:

**Հաշվետվություն**

Եվրասիա միջազգային համալսարանը 2014-15 թթ. շարունակել է ակտիվ ջանքերը միջազգային համագործակցության ակտիվացման, նոր ծրագրերի կյանքի կոչման և նոր գործընկերների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատման ուղղությամբ:

2015թ. շարունակվել են արդեն ավարտական փուլում գտնվող Էրազմուս երեք ծրագրերի՝ ALRAKIS I, ALRAKIS II և MID, շրջանակներում ուսանողների և դասախոսների փոխնակումը: Ընդհանուր առմամբ արդեն շուրջ 15 ուսանող, 3 դասախոհ, 4 ասպիրանտ և 8 աշխատակից է վերապատրաստվել այս ծրագրերի շրջանակում վերջին երեք տարիների ընթացքում: Միևնույն ժամանակ Եվրասիա միջազգային համալսարանը հյուրընկալել է նույն ծրագրերի շրջանակում 5 ուսանողների գործընկեր բուհերից:

Նշված ծրագրերի շրջանակում արդյունավետ համագործակցության արդյունքում, բարձր գնահատելով գործընկերային շփումները, արդեն Էրասմուս պրոյու ծրագրում Եվրասիա միջազգային համալսարանը ընգրկվեց ավելի քան 6 փոխանակման ծրագրերում, այդ ցուցանիշով զիջելով միայն հանրապետության մեկ ԲՈՒՀ-ի:

ԵՄՀ-ի եւ գործընկեր համալսարանների համագործակցության արդյունքում այս պահին հասանելի են փոխանակման 6 ծրագրեր հետեւյալ համալսարաններում.

1. Վարշավայի բնական գիտությունների համալսարանը (Warsaw University of Life Sciences),
2. Վարշավայի տնտեսագիտության համալսարանը (Warsaw School of Economics),
3. Թուրքիայի մերձավոր արևելքի համալսարանը (Middle-East University in Turkey),
4. Չեխիայի Մասարիկ համալսարանը (Masaryk University)
5. Վիլնյուսի Միկոլաս Ռոմերիս համալսարանը (Mykolas Romeris University),
6. Տեսալոնիկի Արիստոտել համալսարան (Aristotle University of Thessaloniki)

Համագործակցության և փոխանակման երկկողմ պայմանագիր է ստորագրվել նաև Վիլնյուսի պետական համալսարանի հետ, որի համաձայն կողմերը նյութական աջակցություն են ցուցաբերում փոխանակմանը մասնակցող ուսանողներին/բուհերն ապահովում են կացարանով և տրամադրում են 60 եվրո կրթաթոշակ/, ասպիրանտներին, դասախոսներին և վարչական աշխատակիցներին և ապահովում անսահմանափակ թվով ուղևորների և դասախոսների փախանակում:

**ՆՊԱՏԱԿ 4. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱՎՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ**

**ԱՊԱՀՈՎՈՒՄ:**

**Խնդիր 4.1. Նպաստել ԵՄՀ ֆինանսական անկախության բարձրացմանը՝ դեպի ԵՄՀ հոսող ֆինանսական մուտքերի կայունության և դիվերսիֆիկացիայի միջոցով:**

1. Նպաստել ԵՄՀ ընդունելության բարձրացման կայուն հենքի ձևավորմանը՝ ընդլայնելով համագործակցությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ:
2. Նպաստել ԵՄՀ ընդունելության բարձրացման կայուն հենքի ձևավորմանը՝ Եվրասիա և Օհանյան վարժարանների շրջանավարտների շնորհիվ:
3. Նպաստել դեպի ԵՄՀ օտարերկրյա ուսանողների ներհոսքին՝ մարքեթինգի, անհրաժեշտ ընթացակարգերի մշակման, ներդրման, թարգմանության և հասանելիության ապահովման միջոցով:
4. Նպաստել ԵՄՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտական և այլ նախագծերի իրականացմանը՝ պետական, դոնոր, սփյուռքի և այլ կազմակերպություններից ֆինանսական միջոցների ներգրավման միջոցով:

**Հաշվետվություն**

2014-2018թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներն իրականացնելու համար Եվրասիա միջազգային համալսարանի Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնը իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նպատակ են հետապնդել մեծացնելու համալսարան ընդունվող դիմորդների և վարժարան ընդունվող աշակերտների թիվը: Իրականացվել են պրեզենտացիաներ դպրոցներում, քոլեջներում, հեռուստատեսությամբ և ռադիոյով սփռվել են զանազան հայտարարություններ կամ ներկայացվել են համալսարանի կյանքին առնչվող գլխավոր իրադարձություններ, կանոնավոր կարգով իրականացվել են բանավեճի ակումբի և «Քայլ առաջ» ծրագրով նախատեսված մրցույթներն ու թրեյնինգները: Շատ արդյունավետ են անցել 16 դպրոցներում անկացված փափուկ հմտությունների զարգացման վերաբերյալ սեմինարները, որոնց նկատմամբ դպրոցների և տնօրենները, և աշակերտները ցուցաբերել են

մեծ հետաքրքրվածություն:

Հաշվետու ժամանակաշրջանում ԿԳ նախարարի հրամանով «Քայլ առաջ» ծրագիրը դիտվել է որպես լրացուցիչ կրթական և երաշխավորվել է անցկացնել ավագ դպրոցներում:

Այնուամենայնիվ հանրակրթական բարեփոխումներով և ժողովրդագրական հայտնի փոփոխություններով ու հատկապես պետական հովանավորություն ունեցող բուհերի պարտադրված անհավասար մրցակցության և այլ գործոններով պայմանավորված լուրջ դժվարություններ են ծագել ընդունելության գործընթացներում:

Համեմատության և քանակական միտումը տեսնելու նպատակով 2010 թվականին ուսանողության թիվը հավատարմագրված երեք մասնագիտությունների կրթական բոլոր ծրագրերում ընդգրկվածների հաշվով կազմել է 709 ուսանող, 2013 թվականին նվազել է մինչև 533, իսկ 2014թ. կազմել է 413, 2015-ին 416: Վերլուծությունները ցույց են տալիս, որ այս թվերը կայունացման միտում ունեն և 2014-2015 թվականներին մեծ տարբերություն չի նկատվել: Չնայած կենտրոնացված քննական համակարգով ընդունվածների թիվը դեռևս չնչին է, սակայն Եվրասիա հենակետային վարժարանից և քոլեջներից հեռակա 2- րդ կուրս, իսկ այնուհետև առկա ուսուցման համակարգի տեղափոխման որոշակի ավելացում է կատարվում, որի շնորհիվ առաջիկայում ուսանողների թիվը կարող է նորից ավելանալ՝ հատկապես նկատի ունենալով, որ հավատարմագրման դեպքում թիվը կարող է նորից ավելանալ առնվազն մեկ ու կես անգամ (ի դեպ, համալսարանի վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո մեկ հերթ ուսուցման դեպքում ուսանողների նորմատիվային թվի հաշվարկով լսարանային ֆոնդը կբավարարի ավելի քան 3 հազար ուսանողի ուսուցման պահանջները):

**Խնդիր 4.2. Նպաստել ԵՄՀ ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ ԵՄՀ ռազմավարական նպատակներին համապատասխան:**

1. Մշակել ԵՄՀ միջինժամկետ ֆինանսական ծրագիր (մինչև 3 տարի) ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման և ռազմավարական ծրագրին համապատասխան և ներկայացնել հաստատման կառավարման խորհրդին:
2. Մշակել ԵՄՀ տարեկան բյուջե ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման և ռազմավարական ծրագրին համապատասխան և ներկայացնել հաստատման կառավարման խորհրդին:

3. Իրականացնել բյուջեի կատարման կիսամյակային մշտադիտարկում, արդյունքները ներկայացնել ռեկտորատի նիստում:
4. Իրականացնել բյուջեի վերանայում՝ ռեկտորի առաջարկով և կառավարման խորհրդի որոշմամբ:
5. Հրապարակել ԵՄՀ բյուջեի կատարման ցուցանիշները ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ և պաշտոնական կայքէջում:

**Հաշվետվություն**  
 Հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսական մուտքերը կազմել են 103 մլն. դրամ, իսկ ելքերը՝ 101 մլն. դրամ:

**Խնդիր 4.3. Նպաստել ԵՄՀ ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ենթակառուցվածքների ապահովմանը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմանը:**

1. Վեր հանել ուսանողների, ասպիրանտների և դասախոսների կարիքները և համալրել ԵՄՀ գրադարանի էլեկտրոնային և տպագիր ռեսուրսները:
2. Վեր հանել ուսանողների և դասախոսների կարիքները և բարելավել ԵՄՀ լսարանային կահավորումը:
3. Վեր հանելով ուսանողների և դասախոսների կարիքները և բարելավել ԵՄՀ ածանցյալ ենթակառուցվածքները (բուֆետ, համակարգչային լսարան, ինտերնետ, սան հանգույցներ և այլն):
4. Բարելավել ԵՄՀ ջեռուցման համակարգը:

**Հաշվետվություն**  
 Կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է գրադարանային ֆոնդով և տվյալների բազայով հիմնական կրթական ծրագրերի դասընթացների ցանկի բովանդակությանը համապատասխան: Գրադարանում թղթային և էլեկտրոնային տարբերակներով առկա են ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնարար դասագրքեր, պրակտիկումներ, օրենսգրքեր, նորմատիվ իրավական ակտերի ժողովածուներ և այլ ուսումնական ձեռնարկներ: ԿԾ իրականացման ընթացքում հրապարակվող պարբերականներից և հետազոտական նյութերից օգտվելու նպատակով ԵՄՀ-ն անդամակցում է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումին (ՀԷԳԿ), ունի միջազգային SPRINGER, EBSCO էլեկտրոնային գրադարանային ցանցերից և DUK-ի համալսարանի կողմից հրատարակած ամսագրերից օգտվելու հնարավորություն: Միջգրադարանային բաժնույթից օգտվելու համար համալսարանը



պայմանագրեր ունի նաև Հայաստանի Ազգային գրադարանի, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ, ունի Միավորված Ազգերի Կազմակերպության նյութերի ու հրատարակությունների անկյուն: Գրադարանի և համակարգչային լսարանի համակարգիչներն ապահովում են համապատասխան տեղեկատու համակարգերի տեղեկատվական բազաներից օգտվելու հնարավորություն (Arlis, DataLex և այլն): 2014թ. ընթացքում ուսանողների շրջանում իրականացված հարցումները ցույց տվեցին, որ մասնագիտական գրականության հասանելիությունն առկա (հեռակա) համակարգի ուսանողների 73%-ը (78%-ը) գնահատում է գերազանց և լավ, իսկ ընդհանուր գրադարանային ծառայություններից բավարարվածությունը 86%-ի (87%-ի) մոտ գնահատվել է որպես գերազանց և լավ:

2014-2015թթ. գրադարանային ֆոնդը համալրվել է 655 նոր գրքերով: Բացի այդ, Համալսարանը նվիրատվության կարգով Բեյրութից ստացել է հայ անվարի գրող, հարպարակախոս, տասնյակ գրքերի հեղինակ՝ Լևոն Վարդանի անտիպ նյութերը և գրադարանային ֆոնդը՝ շուրջ 900 կտոր իրավաբանական, տնտեսագիտական, պատմական, բանասիրական, միջազգային հարաբերությունների և այլ գրքեր: Առանձնապես բարցրաթեք ձեռագրեր և գրքեր կան Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Համալսարանում ստեղծված հանձնաժողովը զբաղված է գրքերի նպատակային բաշխմամբ և փաստաթղթավորման աշխատանքներով: Ֆոնդը դեռևս փակ է: Բացումը նախատեսվում է 2016թ-ին, որին կմասնակցեն ներկայացված գրականության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող գիտնականներ, ասպիրանտներ, գրադարաններ և այլն: Գրադարանի նյութերը հասանելի կլինեն բոլոր ցանկացողներին, իսկ գրքերի ցանկը կտեղադրվի Համալսարանի կայքում:

Ուսումնառության որակը բարձրացնելու և համագործակցային մեթոդների կիրառումը ընդլայնելու նպատակով բուհը իրականացրել է նաև ներդրումներ՝ ուղղված թե՛ լսարանների ընդհանուր հարմարավետության, թե՛ տեխնիկական հագեցվածության բարելավմանը: Ուսանողների շուրջ 70%-ը այս ցուցանիշներն ընդհանուր առմամբ գնահատում են լավ և գերազանց: Այնուհանդերձ, այն հարցին, թե ինչպես կծախսեին բուհի բյուջեն ուսանողների զգալի մասը (առկա համակարգում սովորողների 20%-ը, իսկ հեռակայի 21%-ը) պատասխանել են, թե «բոլոր լսարանները կապահովելին տեխնիկական միջոցներով»: Այսինքն, լսարանների կահավորումը, տեխնիկական միջոցներով հագեցումը պետք է լինի շարունակական գործընթաց և իրականացվի բուհի դասավանդման մեթոդների զարգացմանը զուգընթաց: Առկա (հեռակա) ուսանողների 47%-ը (51%-ը) ինտերնետի հասանելիությունը բուհում գնահատել է գերազանց, իսկ 36%-ը

(34%-ը)՝ լավ, համակարգչային սենյակից օգտվելու հնարավորությունը 47%-ը (52%-ը) գերազանց, իսկ 32%-ը (33%-ը)՝ լավ: Նշված ցուցանիշները նույնպես վկայում են այս ուղղությամբ մի կողմից մշտապես կատարվող բարելավումների և դրանց արդյունքում ուսանողների բավարարվածության մակարդակի մասին:

Ներհամալսարանական գործընթացների կառավարման վրա բարենպաստ ազդեցություն է ունեցել ներքին տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է ընձեռել կենտրոնացնել ուսանողների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և ավտոմատ ստանալ հաշվետվություններ: Այդ համակարգից օգտվում են բոլորը. բուհի աշխատակիցները, ուսանողները, շրջանավարտները, դասախոսները և այլն: Student M համակարգի միջոցով ուսանողները հնարավորություն են ունենում ծանոթանալ անձնական տեղեկատվությանը, կազմել անհատական ուսումնական պլան, ներբեռնել դասատախտակը, հետևել գնահատականներին, իմանալ ՄՈԳ-ը, տեղեկություն ստանալ նաև պրակտիկայի, ավարտական աշխատանքի, պետական քննությունների և այլնի վերաբերյալ: Այդ համակարգում տեղադրված է նաև ուսումնական պլանները, ուսանողների կենսագրականները և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում հատուկ ուշադրություն է դարձվել համալսարանի կայքերի աշխատանքներին, բարելավվել է տեղեկատվության օպերատիվությունը, ստեղծվել են նոր բաժիններ, բովանդակությունը թարգմանվել է անգլերեն և ռուսերեն լեզուներով: Ուրախակի է, որ կայքերը դարձել են ուսանողների և աշակերտների համար ամենօրյա տեղեկատվության ստացման աղբյուր (այցելուների թիվը անցնում է 5 հազարի սահմանը): Կայքերն իրենց բովանդակային և կառուցվածքային բնութագրերով, տեղեկատվության օպերատիվությամբ վարկանիշավորող կազմակերպությունների կողմից դիտվել են որպես լավագույններից:

**ՆՊԱՏԱԿ 5. ՈՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆԸ ՆՊԱՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ**

**Խնդիր 5.1. Ներդնել որակի մշակույթի տարածմանը նպաստող կառավարման արդյունավետ մեխանիզմներ:**

- 1.Մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ռազմավարական ծրագիրը, որը ներառում է ԵՄՀ առաքելությունը, երկարաժամկետ նպատակները և դրանց իրականացման ուղիները:
2. ԵՄՀ ռազմավարական ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ գործողությունների ծրագիրը:
3. ԵՄՀ գործողությունների ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ միջինժամկետ (մինչև երեք տարի) գործողությունների ծրագիրը:
4. ԵՄՀ միջինժամկետ գործողությունների ծրագրին կից մշակել և ԵՄՀ կառավարման խորհրդում հաստատել ԵՄՀ տարեկան գործողությունների ծրագիրը՝ ըստ ԵՄՀ ստորաբաժանումների:
- 5.Իրականացնել ԵՄՀ ներքին գործառնությունների մոնիտորինգ՝ վեր հանելով պլանավորված և իրականացված գործառնությունների միջև շեղումները և դրանց պատճառները և ներկայացնել ռեկտորատի քննարկմանը:
- 6.Ներդնել ներքին գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ:

**Հաշվետվություն**

Այս ոլորտում նախանշված բոլոր միջոցառումները, այդ թվում ԵՄՀ ռազմավարական ծրագրի հաստատումը, համապատասխան գործողությունների ծրագրի հաստատումը, Որակի ապահովման ուղեցույցի հաստատումը իրականացվել են դեռևս 2014 թ. -ին: 2014 թ. -ի վեր համալսարանի առաջնահերթություններից է նշված փաստաթղթերին համապատասխան գործընթացների կազմակերպումը: Ներդրված համակարգի ամբողջական կիրառության նպատակով որոշում է կայացվել նշանակելու ամբիոնային որակի գործակալներ, ովքեր կաջակցեն ԵՄՀ ՈԱ կենտրոնին առավել բովանդակային և խորքային բարեփոխումների իրականացման և մոնիտորինգի ուղղությամբ: Վերափոխվել է ստորաբաժանումների հաշվետվողականության մեխանիզմները և ձևաչափերը, որոնք բխում են համալսարանի ընդհանուր ռազմավարական նպատակներից և 2014-2018 գործողությունների

ծրագրից: Ներդրվել է պլանավորման և հաշվետվողականության էլեկտրոնային համակարգ, համակարգի կիրառության նպատակով վերապատրաստվել են ինստիտուցիոնալ ղեկավարները, ովքեր էլ իրենց հերթին վերապատրաստում են ենթակայաներին:

**Խնդիր 5.2. Բարձրացնել ԵՄՀ գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով բուհի կողմից շնորհվող որակավորումների, գիտահետազոտական աշխատանքների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ:**

1. Հրապարակել ԵՄՀ կողմից իրականացվող կրթական ծրագրերի և առարկայական ծրագրերի նկարագրերը, նպատակները և վերջնարդյունքները:
2. Ապահովել ԵՄՀ ընդունված ուսանողների՝ ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը, ծանոթացնել նրանց իրենց իրավունքներին ու պարտականություններին:
3. ԵՄՀ գիտական կենտրոնի կողմից կազմակերպվող գիտաժողովի արդյունքները հրապարակել ԵՄՀ տարեգրքով:
4. Հրապարակել ԵՄՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունը:

**Հաշվետվություն**

Խնդրի իրականացումը համարում ենք հիմնականում ավարտված և հետագա քայլերն ուղղված կլինեն հիմնականում արդյունքների գնահատմանը և բարելավմանը: Համալսարանի պաշտոնական կայքէջում տեղադրված են շնորհվող որակավորումների նկարագրերը, վերջնարդյունքները և դիմորդներն ունեն կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ստացման ազատ հնարավորություն: ԵՄհ ՈԱ կենտրոնի կողմից իրականացված հարցման արդյունքներով հարցված ուսանողների 63.8% միանշանակորեն, իսկ 27.6%-ը հիմնականում համարում է, որ առարկայական ծրագրերը, նկարագրերը և վերջնարդյունքները հասանելի են, այսինքն հարցված ուսանողների մոտ 90%-ը բավարարված է հասանելիությամբ: Ուսանողները բարձր են գնահատել նաև համալսարանի կողմից ընդունելության ժամանակ տրամադրված տեղեկատվության հասանելիությունը և որակը, աշխատակիցների կողմից խորհրդատվության մակարդակը:

ԵՄՀ ամենամյա գիտական համաժողովի արդյունքները տարածվում են պաշտոնական կայքէջի միջոցով, իսկ հրատարակված հոդվածները տեղադրվում են կայքում առանց ծածկագրի: հոդվածները հրատարակվում են նաև տպագիր ժողովածույում, որը անվճար տրամադրվում է ՀՀ բոլոր գրադարաններին և գիտական կառույցներին:

Համալսարանի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով համալսարանի բոլոր նորմատիվ փաստաթղթերը, ինչպես նաև Ռազմավարական ծրագիրը, գործողությունների ծրագիրը և ռեկտորի ամենամյա հաշվետվությունը բաց տեղադրվում են համալսարանի պաշտոնական կայքէջում՝ Որակի ապահովման «Փաստաթղթեր» բաժնում:

**Խնդիր 5.3. Նպաստել ԵՄՀ հասարակական պատասխանատվությունն իրացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը:**

1. Իրականացնել մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:
2. Իրականացնել որակավորման բարձրացմանն ուղղված մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ ՀՀ այլ բուհերի դասախոսների, ասպիրանտների համար:
3. Ընդլայնել գիտական հանրային և պետական քաղաքականություն մշակողներին մատուցվող հասարակական ծառայությունների տեսակները:
4. ԵՄՀ իրավաբանական կլինիկայի գործունեությամբ իրականացնել իրավաբանական մասնագիտական խորհրդատվություն ֆիզիկական և իրավաբանական անձանց:
5. ԵՄՀ բիզնես դպրոցի միջոցով իրականացնել հասարակական տարբեր խմբերի համար նախագծեր (վերապատրաստումներ, բիզնեսի խորհրդատվություն, ամառային դպրոցներ և այլն):
6. ԵՄՀ ուսանողների, դասախոսների, վարչական աշխատողների հետ համատեղ պարբերաբար իրականացնել կամավորական աշխատանքներ, բարեգործական նախաձեռնություններ և այլն՝ իբրև ԵՄՀ ներքին մշակույթի դրսևորում:

## Հաշվետվություն

2014-2015թթ ընթացքում ԵՄՀ Կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի միջոցով իրականացրել է մասնագիտական կողմնորոշման դասընթացներ Երևան քաղաքի Արաբկիր, Նոր-Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների թվով 31 դպրոցներում, իսկ ՀՀ թվով 32 քոլեջների դասախոսներ, վարչական աշխատակիցներ, դպրոցների ուսուցիչներ մասնակցել են ԵՄՀ-ում վերապատրաստման դասընթացների, որոնք վարել են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

Հաշվետու ժամանակահատվածում Եվրասիա միջազգային համալսարանը Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԿԳ նախարարության թույլտվությամբ 52 հիմնական և ավագ դպրոցներում իրականացրել է հմտությունների զարգացման «Քայլ առաջ» ծրագիրը՝ տեղացի և միջազգային կրթական փորձագետների ներգրավմամբ: Ծրագրի նպատակն էր աշակերտների մոտ զարգացնել նոր և լրացուցիչ գործնական հմտություններ, որոնք կնպաստեն նրանց ոչ ստանդարտ մտածողությանը, անհատականությունից ելնելով՝ անձնական զարգացման հետագծի ու մասնագիտական կարիերայի անսխալ կառուցմանը: Իրականացվել է նաև «Քայլ առաջ» ծրագրի ամենամյա երկշաբաթյա ամառային դպրոցը, որին մասնակցել են 18 աշակերտներ Երևան քաղաքի տարբեր դպրոցներից:

«AIESEC» ՀԿ-ի և Կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել է «Երիտասարդների ֆինանսական գրագիտություն» 1-ամսյա դասընթացը ուսանողների, շրջանավարտների և աշակերտների շրջանակում, որին մասնակցել են ընդհանուր առմամբ 47 անձ, իսկ «GSOFT» ընկերության հետ համատեղ կազմակերպված C1+ հաշվապահական ծրագրի վերաբերյալ լրացուցիչ անվճար դասընթացներին՝ 41, որոնք ընտրվել են 56 դիմորդներից:

ASPIRE նախագծի շրջանակում կազմակերպվել է «Իրազեկման օր», որի նպատակն էր հասարակության լայն շերտերին ներկայացնել հատուկ կարիքներ ունեցող անձանց կրթական ոլորտին վերաբերող հիմնախնդիրները: Միջոցառման ընթացքում կազմակերպվել են «Կրթություն բոլորի համար. հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» կարգախոսով ֆլեշ-մոբ և «Բարձրագույն մասնագիտական կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց համար» թեմայով կլոր սեղան

քննարկում, որին մասնակցել են ծրագրի անդամ ութ երկրների մասնագետներ (Գերմանիայից, Անգլիայից, Վրաստանից և այլն), ինչպես նաև ծրագրում ընդգրկված ՀՀ մի շարք բուհերի մասնագետներ:

Հաշվետու ժամանակաշրջանում 15 ուսանող ներգրավվել է կամավորական աշխատանքներում՝ Գործատուների հանրապետական միությունում, «ԷՅ ԴԻ ԱՐ» ընկերությունում, «Արմենթել» ընկերության և մի շարք այլ ընկերություններում: Իրավագիտության ամբիոնի իրավաբանական կլինիկայի շրջանակներում յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի կազմակերպվել են հերթապահություններ կլինիկայի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Հերթապահությունների ընթացքում կլինիկա դիմած քաղաքացիներին տրամադրվել է խորհրդատվություն սեփականության, կենսաթոշակի անցնելու, ճանապարհային ուստիկանության կողմից կայացրած վարչական տույժերի և այլն վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում, միջին հաշվով, ամիս ու կես պարբերականությամբ հրավիրվել են գիտական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվել են համալսարանի կրթական, գիտական, մեթոդական, ռազմավարական և այլ կարևոր նշանակության խնդիրներ, ինչպես նախապես պլանավորված, այնպես էլ ընթացիկ իրադրությունից ելնելով: Ավելի հաճախակի ընթացիկ հարցերը քննարկվել են, համալսարանի կառուցվածքային սխեմայով որպես խորհրդակցական մարմին հաստատված ռեկտորատի նիստերում:

Հաստատում եմ

25.03.16թ.

ԵՄՀ Կառավարման խորհրդի նախագահ՝



Ս. Պիպոյան